

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորանքի խոսքը Մայրության և գեղեցկության տոնի առթիվ

07.04.2020թ

Սիրելի մայրեր

Ձեր հոգու երազանքն է միշտ եղել՝ հայրենիքը տեսնել խաղաղ ու բարեկեցիկ, զավակներին՝ առողջ, երջանիկ, հասարակության համար պիտանի մարդիկ դարձած: Եվ այդ երազանքն իրականություն եք դարձրել ամենօրյա նվիրումով, հանրօգուտ ու վաստակաշատ աշխատանքով: Ձեր տված դաստիարակության, արիության ու տոկունության շնորհիվ միասին կերտեցինք մեր ռազմական հաղթանակները, կանգուն պահեցինք մեր աշխարհը եւ հասանք Նոր Հայաստանի հանգրվանին:

Շնորհավորում եմ Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ, մաղթում երջանկություն, գարնանային պայծառ տրամադրություն:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ

Գնել Սանոսյան